

«ԿԱՐՔԵԴՈՎԷ/ՔԱՂԿԵԴՈՆ» ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԱՂԲԻՐՆԵՐՈՒՄ

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Հօր ժառանգութեանը նոր տիրացած և Պարսից դէմ պատերազմի պատրաստուող Աղեքսանդր Մակեդոնացին, ի թիւս այլ գաւառների ու աշխարհների, զօրաժողովի համար դիմում է և Հռոմեացիներին: Վերջիններս «ի ձեռն Մարկոսի Եմելեայ»¹ Արամազդի² պսակ են յանձնում նրան, տալիս հարիւր լիտր ոսկի. «հարկս հազար զինուոր և ոսկի չորեքհարիւր քանքար» և ասում. «Այլ ևս աւելի զինուորս տայաք քեզ, թէ ոչ ունէաք պատերազմ ընդ քաղկեդոնացիսն»³: Յետագայ վերամշակեալ հայկական խմբագրութեան մէջ (նոր հրատարակութեամբ՝ Ն. Բնագիր) կայ սոսկ շարադրանքի տարբերութիւն՝ «Բայց ասէին աւելի ևս տալ նմա զինուորս, եթէ ոչ պատերազմ առաջի կայր ընդդէմ քաղկեդոնացիսն բազմաւ»⁴: Մեր ընդգծած Քաղկեդոնացիսն տոհմանունը, հրատարակչի հաւաստմամբ, համեմատուած 67 ձեռագրերում տարբերութեամբ չունի: Եւ այնուամենայնիւ, «Աղեքսանդրի պատմութեան» նախորդ՝ հրատարակիչ Հ. Ռափայէլ Թրեանցը իր համեմատութեան առած 10 ձեռագրերում այլընթերցում չունենալով հանդերձ, անհրաժեշտ է նկատել ըստ լատինական խմբագրութեան սրբագրել բնագիրը՝ Քաղկեդոնացիսն-ը Կարքեդովնացիսն կարգաւորով⁵: Արդ, որ այդ երկու էթնանուն-տեղանունները նոյնանիշ լինել չեն կարող՝ ինքնին պարզ է, որովհետեւ Քաղկեդոնացիները երբեք Կարքեդովնացիներ չեն յորջորջուել:

Հ. Ռափայէլ Թրեանցի սրբագրութիւնը չի վրիպել բնագրագէտ Նորայր Բիւզանդացու ուշադրութիւնից: Վերջերս լոյս տեսած նրա «Նախնիք» եզակի արժէք ներկայացնող գրքում Քաղկեդոն/Կարքեդովն և համապատասխանաբար Քաղկեդոնացի/Կարքեդովնացի շփոթի երեք դէպք է արձանագրուում Հայոց միջնադարեան մատենագրութեան մէջ.

Քաղկեդոն փ. Կարքեդոն, Եւս. Ժմ. 82 (տե՛ս յերես 129 Քաղուածոց իմոց յԵւսեբեայ):

Քաղկեդոնացիք փ. Կարքեդոնացիք (Սուտ-Կալլիսթ., 35):

¹ Հայկական որոշ ձեռագրերում «Եմելեայ»-ն վրիպմամբ ընթերցուել է «Եւ Մելեայ», և մէկ զօրավարը դարձել երկուսը: Տե՛ս «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»: Հայկական խմբագրութիւններ: Աշխատասիրութեամբ Յասմիկ Սիմոնեանի: Երևան, 1989, էջ 535 (ծան. 86):

² Հայկական թարգմանական աղբիւրները յաճախ հին աշխարհի աստուածներին (իմա՛ չաստուածներին) նոյնացնում են Արամազդի հետ: Այսպէս, օրինակ, Եւսեբիոսի Քրոնիկոնում յունարէն բնագրի Բելի և նրան փոխարինող Զևսի (Դիոս) դիմաց Հայերէնում ունենք. «Եւ քիւղայն, ասեն, որ յունարէն Դիոս թարգմանի, և Հայերէն Արամազդ» («Քաղուածոյք ի թարգմանութեանց նախնեաց, հանդերձ յոյն բնագրաւ», Վիեննա, 1849, էջ 350-351):

³ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, էջ 379:

⁴ Անդ., էջ 124:

⁵ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ, 1842, էջ 35:

Քաղկեդոնացիք փ. Կարքեդոնացիք (Վկ. Եփիմեայ, 477)⁶:

Եփեսոսի ժամանակագրութեան համապատասխան ծանօթագրութեան մէջ Մ. Ալֆերեանը արձանագրում է հունարէն Καρχηδών-ի և լատիներէնի Carthago-ի դիմաց հայերէն ձեռագրում **Քաղկեդոն** ունենալը⁷ և, ինչպէս ասուեց, վերականգնում **Կարքեդոն** ընթերցումը⁸:

Ուղղումները կատարելիս Ն. Բիւզանդացին ելակէտ է ունեցել նշուած բնագրերի հրատարակիչների արձանագրած ընթերցումներն ու նրանց սրբագրման փաստը: Ինքն այս պարագայում որևէ քննութիւն չի կատարել⁹: Ուրեմն՝ երկու դէպքում ունենք սակաւածանօթ **Կարքեդոնի** փոխարէն հայկական աղբիւրներին քաջ յայտնի **Քաղկեդոն** և մեկում հակառակը՝ **Քաղկեդոնի** փոխանակ՝ **Քարկեդոն**:

Սակայն խնդիրը յիշեալ վրիպումների ուղղմամբ չի աւարտուում: Աֆրիկեան Կարքեդոն-ը (Կարթագէնը) վաղմիջնադարեան հայկական մատենագրութեանը ծանօթ է նաև տեղիս III դարի եպիսկոպոս (249-258) ս. Կիպրիանոսի Վկայաբանութեան V դարի առաջին կէսի թարգմանութեամբ¹⁰, ինչպէս նաև նոյն սրբին նուիրուած Գրիգոր Աստուածաբանի ճառով ու այդ ճառի համար գրուած Դաւիթ Քորայրեցու «Պատճառով»¹¹: Ս. Կիպրիանոսի «Վկայաբանութիւնն» ու զրուցախառն այլ նիւթեր ծանօթ են եղել նաև Գրիգոր Նարեկացուն¹²: Ս. Կիպրիանոսի «Վկայաբանութեան» պարագան շեշտում ենք ոչ պատահականօրէն. սրբախօսութեան պատմութեանը վաղուց յայտնի է **Անտիոքացի** և **Կարքեդոնացի** սուրբ Կիպրիանոսների կենսագրական մանրամասների շփոթը, որով Կարքեդոնացին

⁶ Նորայր Ն. Բիւզանդացի, Նախնիք: Հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը: Ժնև, 1996, էջ 356:

⁷ Տե՛ս Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանականք երկմասնեայ, թարգմանեալ ի լատին բարբառ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ Վարդապետի Մխիթարեան Աւգերեանց, մասն Բ, Վենետիկ, 1918, էջ 182 (ծան. 978):

⁸ Տե՛ս նշւ. աշխ., հ. Ա, էջ 85-88, հ. Բ, էջ 82, 85, 93: Կարքեդոնի պատմութեան հանգամանալի տեղականք և գրականութիւն տե՛ս Paulys Realencyclopädie der classischen Altertumswissenschaft, X2, Stuttgart, 1919, S. 2224-2242.

⁹ Համոզուելու համար նկատենք, որ «Եփիմեայ կոյսի վկայաբանութեան» Հ. Ղ. Ալիշանի հրատարակած բնագրում «Քաղկեդոնացիների» յիշատակութեան մի դէպքում է միայն առկայ «Քարկեդոնացւոցն» այլընթերցում, այն էլ արտացոլուած տողատակում («Վարք և վկայաբանութիւնք սրբոց», հ. Ա, Վենետիկ, 1874, էջ 477): Նահատակութիւնը տեղի է ունեցել «ի ժամանակս ամպարիչտ թագաւորին Դիոկղետիանոսի», Քաղկեդոնականացւոց քաղաքի անթիպատոս Պրիսկոսի հրամանով:

¹⁰ Բնագրի հրատարակութիւնն ու ուսումնասիրութիւնը տե՛ս Հ. Ն. Ակինեան, Վկայաբանութիւն ս. Կիպրիանոսի Կարքեդոնի եպիսկոպոսի, ՀԱ, 1922, էջ 1-17:

¹¹ Մասնաւորեցումը տե՛ս Կ. Մ. Մուրադեան, Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրութեան մէջ, Երևան, 1983, էջ 77, 184: Կարկեդոն/Կարքեդոնը իբրև Աֆրիկայի մայրաքաղաք յիշատակուած է Մխ. Գոշի «Թուղթ առ Վրացիսն» երկում («Գանձասար», 2, էջ 351):

¹² Մատենագրութիւնք, 1840, էջ 386: Հմմտ. Ն. Ակինեան, նշւ. աշխ., էջ 9-10:

կարող էր իբրև Անտիոքացի ընկալուել և հակառակը, կամ նոյնիսկ՝ մէկ Կիպրիանոս ճանաչելով, նոյնացուել Կարքեդոնն ու Անտիոքը¹³:

Առաւել առեղծուածայինը, սակայն, այդ նոյն Կարքեդոնին տեղանուան-էթնանուան ներկայութիւնն է Գուգարաց Աշուշա բղնշխի յունարէն կնիքի վրայ, որ երկար ժամանակ զբաղեցնում է կովկասագէտներին: Այստեղ կարդում ենք. ΟΥΣΑΣ ΠΙΤΙΑΞΗΣ ΙΒΗΡΩΝ ΚΑΡΧΗΔΩΝ – «Աշուշա բղնաշխ Կարքեդոնի վրաց»¹⁴: Աւելորդ է բացատրել, թէ Գուգարաց բղնշխը չէր կարող ոչ Կարքեդոն–Կարթագէնի, ոչ էլ, եթէ ս. Կիպրիանոսի Վկայաբանութեան Հիման վրայ Անտիոք–Կարքեդոնի շփոթ ենթադրենք, Անտիոքի պաշտօնեայ յորջորջուել, առաւել ևս որ՝ Վրաց բղնշխ լինելն արդէն արձանագրուում է: Պ. Պետերսն ու Գ. Աբգարեանը առաջարկում են կնիքի ΚΑΡΧΗΔΩΝ–ը ΚΟΛΧΙΔΩΝ սրբագրել, սակայն Ե. Թադաշչիլին, Կ. Կեկելիճէն, Կ. Թումանովը և տողերիս հեղինակը նկատել են, թէ Իբերիան և Կոլխիդան 368 թուականից պետական տարբեր կազմաւորումներ են, ուստի բղնշխութեան միասնական ինստիտուտ ունենալ չեն կարող: Հասկանալի չէ նաև Իբերական Կոլխիդա կամ Կոլխիդական Իբերիա կապակցութիւնը՝ երբ խօսքը, ինչպէս ասուեց, տարբեր թագաւորութիւնների մասին է: Ընդ սմին՝ պաշտօնական կնիքի վրայ ΚΑΡΧΗΔΩΝ–ΚΟΛΧΙΔΩΝ շփոթ կամ վրիպում հնարաւոր չէ ենթադրել, ուստի առաջինը Կ. Կեկելիճէն է կռահել, թէ այստեղ սխալմունք և սրբագրելիք չկայ, քանի որ խօսքը վերաբերում է Սասանեան Պարսկաստանին՝ ենթակայ Գուգարաց բղնշխին, իսկ իրանական այդ հարստութիւնը Սեբէոսի մօտ «ազգն Կարքեդովմայեցի» է կոչուած¹⁵ («Եւ եղեւ ի նուազիլ ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Վռամշապուհ արքայի տիրէ ի վերայ սորա ազգն Կարքեդովմայեցի իշխանութեանն»¹⁶): Սեբէոսի Պատմութիւնը ռուսերէն թարգմանելիս Բ. Պատկանեանը ուղղորութեան է առել Կարքեդովմայեցի էթնանունը և ծանօթագրել. «Թէև այս անուան տակ պէտք է հասկանալ Պարսիկներ, սակայն մենք ոչ մի կերպ չկարողացանք որոշել այս անուանումը», և ապա դիմում է Պերսպոլիսի արձանագրութիւններում յիշատակուող Karka ցեղանունը Շպիգելի տուած բացատրութեանն ու նրա վկայակոչած գրականութեանը¹⁷: Այստեղ նշում է, որ յիշեալ ցեղի բնակութեան վայրը որոշելը

¹³ Hippolyte Delehaye, Cyprian d'Antioche et Cyprian de Carthage, "Analecta Bollandiana", 39 (1921), p. 314- 332.

¹⁴ Կնիքի վերջին վերատպութիւնը տե՛ս Arménie entre Orient et Occident. Trois mille ans de civilization. Sous la direction de Raymond H. Kévorkian, Paris, 1996, p. 72, 237. Նաև՝ Պարոյր Մուրադեան, Սուրբ Շուշանիկի վկայաբանութիւնը, Երևան, 1996, էջ 183-184:

¹⁵ Կ. Կեկելիճէն, Աշուշա բղնշխի կնիքը..., «Դրուագներ վրաց Հին մատենագրութեան պատմութիւնից», Հ. Ա. Թրիլիսի, 1956, էջ 147-154 (վրացերէն): Cyril Toumanoff, Studies in Christian Caucasian History, 1963, p. 184, 188-189.

¹⁶ Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրութեամբ Գ. Վ. Աբգարեանի, Երևան, 1979, էջ, 64:

¹⁷ История императора Иракла, сочинение епископа Себеоса, писателя VIII века. Перевод с армянского К. П. Патканяна, СПб., 1862, с.181 (прим. 48).

դժուար է, անկարելի է նկատուում մակեդոնական Χαλκιδικῆ-ի, ինչպես նաև Καρχηδων-Կարթագենի հետ նոյնացումը։ Ռաուլինսոնը (Rawlinson) Karka-ն համադրում է Պոլիբիոսի (V, 5) Καρχίος-ի հետ՝ Մարաստանի հարավ-արևմտեան սահմանում տեղորոշելով։ Սեբեոսի ռուսերեն երկրորդ թարգմանիչ Ստ. Մալխաս-եանցը անյայտ է համարում Սասանեանների կարճեղովմայեցի կոչելու պատճառը և վարկած առաջադրում, թէ գուցէ չար **եղովմայեցի** Աստուածաշնչական արտայայտութեան աղաւաղում է (նկատի ունի նրանց ու Հրեաների միջև եղած թշնամութիւնը)¹⁸։ Սեբեոսի վերջին գիտական հրատարակութեան համապատասխան դրուագի ծանօթագրութեան մէջ Գ. Աբգարեանը վկայակոչել է սրբագրութեան կամ բացատրութեան բոլոր առաջարկները. «Պարսք եղովմայեցի < Պարսք ելամայեցի > (Ս. Կ. «Արարատ», 1899, էջ 315, նաև Ա. Զամինեան), «Յագկերտ Բ. որդի Վռամայ (իբրև հաստատեցաւ) յիշխանութեան» (Ն. Ակինեան), «եղովմայեցի» կամ «Քաղդէացի», կամ «Ստահրացի», առաւել հաւանական է՝ «Քետուրայեցի» (Մ. Գրիգորեան)։

Գ. Աբգարեանը հիմնականում մերժում է եղած այս ու միևս առաջարկութիւնները և, շարունակելով Ստ. Մալխասեանցի կռահումը, եղիշէի երկի ազդեցութեան տակ գրուած Սեբեոսի մեզ հետաքրքրող նախադասութեան **Կարճեղովմայեցի** որակման դիմաց տեսնում է եղիշէի «օրինօք մօգուցն» արտայայտութիւնը, որը («մօգուց») Սեբեոսի մօտ փոխարինուել է «Քաղեայց»-ով և ապա, գումարելով Ստ. Մալխասեանցի ենթադրած «չար»-ը, ստանում է «ազգն [չար Քաղեայց] իշխանութեանն» իմաստը։ Հետևաբար, ըստ Գ. Աբգարեանի, Սեբեոսի **Կարճեղովմայեցի**-ն «չար Քաղեայց»-ի աղաւաղումն է։

Այս ամէնը բանասիրական առումով յիրաւի ուշադրաւ է, եթէ չիմանայինք, որ Աշուշայի կնիքի վրայ ևս՝ ΚΑΡΧΗΔΩΝ-Կարճեղովն կայ, որը, ինչպէս վերևում ասուեց, բնաւ սրբագրութեան ենթակայ չէ, առաւել ևս ըստ յետագայ դարերի հայկական աղբիւրների գրչական հիմքի։ Կարծում ենք, անհրաժէշտ էր Յր. Մակլերի կատարած կռահումին աւելի կարևորութիւն տալ¹⁹, քան այդ գտնում ենք Գ. Աբգարեանի ընդարձակ ծանօթագրութեան մէջ («Դանիէլի գրքի հայերէն պարականոն տարբերակի մէջ պարսիկները յիշատակում են Կարճեղովնի կողքին»)։ Յր. Մակլերի մատնացուցած «Տեսիլ Դանիէլի» պարականոնում **Կարճեղովն**-ը յիշատակում է չորս անգամ²⁰.

Ա տարբերակ

Բ տարբերակ

¹⁸ История епископа Себеоса. Перевел с четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц, Ереван, 1939, с. 148 (прим. 38).

¹⁹ Histoire d'Héraclius par l'Évêque Sebéos. Traduite de l'arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904, p. 156-157. Հմտ. Պատմութիւն Սեբեոսի, էջ 227 (ծան. 118):

²⁰ Թանգարան Հին և նոր նախնեաց. Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Վենետիկ, 1896, էջ 237-239, 244:

1) ... Եւ ասաց ցիւ. Յետ կատարելոյ
զամենայն բանս մարգարէականս
վասն ամենայն քաղաքաց և գաւա-
ռաց՝ Ասիաս, Պոնդոս, Փոփուգիաս,
Գաղատիաս, Կապադովկիաս, Կար-
պաթիաս, Ջմիւռնէս, Անդիոքաս, Ա-
ղեքսանդրիաս, Եգիպտոս, Նիկէաս,
Նիկոդեմիաս, Կաղքէդովնոս, Բիւ-
զէս և Բաբելովնոս ...

Քաղկեդոնիա

2) ... Փոփուգիացւոց մանկունք ծախեսցին
ի սովոյ հացի և ի ջրոյ. երկիր նորա
պատառեսցի, ի կերակուր թռչնոց
եղիցին. և բազումք ի նոցանէ փախիցեն
ի Քաղկեդովն:

Քաղկեդոն

3) ... Կարքեդովն և ազգ Պարսից,
զի՞նչ հասանէ քեզ ի վախճան աւուրց,
դու ոչ գիտես ...

Կարգեդոնէ, ազգ Պարսից
զի՞նչ հասանէ քեզ ...

4) Վայ քեզ յայնմ ժամանակի՝ Եօթնբլուր
Բաբելովնի, յորժամ այրի թագաւորեսցէ,
և վիշապն հալածեսցէ զայլազգին, և
այլազգին որ անուանեալ կոչի Սաղա-
մանդր փախուստ դարձցի, դար-
ձուցեալ զերեսս իւր ի կղզիս. ոսկի
և արծաթ և ապակի պատուականս
և պսակք գաւազանացն. և որ ի
գոգ գազանին երեքաւրեալ յազ-
գէ Պարսից ի Կարքեդովնի. ոչ ոք
հալածեսցէ զնա ի մարդկանէ՝ վասն
սիրոյ վիշապային ...

Հետեւեսցէ, և զտեղի սրբութեան
հալածեսցէ և սատակեսցէ վի-
շապն լեզուաւ իւրով:

2hf

Օրինակներից առաջինը կարելի է Քաղկեդոն-ի Կաղքէդովնոս
գրադարձութիւն նկատել, մանաւանդ որ Բ տարբերակում Քաղկեդոնիա է գրուած:
Երկրորդ օրինակում համատեքստից չի երևում, թէ Փոփուգիները «ի Քաղկեդովն»
փախչելով ուր են յայտնուելու՝ Կարթագենո՞ւմ թէ՞ Պարսկաստանում: Որոշակի և
յստակ են 3-րդ և 4-րդ գործածութիւնները: «Կարքեդովն և ազգ Պարսից, զի՞նչ
հասանէ քեզ ի վախճան աւուրց, դու ոչ գիտես...» նշանակում է՝ Կարքեդովնը
Պարսից ազգի բնակատեղին է, ուստի նրանց դիմում է «քեզ», «դու», «գիտես»

եզակիններով: Նման բացատրութեան անբռնազբօսիկութիւնը նոյնքան և աւելի պարզորոշ է Բ տարբերակի ընթերցմամբ. «Կարքեդոնէ, ազգ Պարսից, զի՞նչ հասանէ քեզ...», ուր **Կարքեդովն**-ը յունարէնի կոչական հոլովի ցուցիչ է կրում և անմիջապէս վերաբերում «Պարսից ազգին»: Չորրորդ օրինակը այլևս կասկած չի թողնում, որ **Կարքեդովնում/Քարկեդովնում** ապրողները պարսիկներ են՝ «յազգէ Պարսից ի Կարքեդովնի»:

Այսպէս ուրեմն, ոչ Աշուշա բղբշխի կնիքը և ոչ էլ Սերէոսի Պատմութիւնը սրբագրութեան կարիք չունեն: IV-VII դարերում մեզանում Սասանեան Պարսկաստանը յիշատակի ճանաչուել է **Կարքեդովն** անունով ևս, պարսիկները՝ **Կարքեդովմայեցի**:

Այսօր դժուար է պարզ ու մէկին կողմնորոշուել վաղմիջնադարեան էթնոգնանաչողութեան և աշխարհաճանաչողութեան շատ յաճախ պայմանական համակարգում: Կարելի է, սակայն, վստահ ասել, թէ այն նշանակալիօրէն տարբերուել է քարտեզագրուող մեր պատկերացումներից:

Նկատուած իրողութիւն է, որ Ս. Գրքի մի շարք դրուագների յունարէնի **Եթովպիա-Եթովպացի** երկրանուն և էթնանուն դիմաց ասորական-հայկական-վրացական խմբագրութիւնները յաճախ **Հինդ-Հնդիկ** են տալիս (Գործք, Ը, 27, Սաղմ., Կէ, 32, Երեմ., ԺԳ, 23 և այլն)²¹, իսկ «Բարադամի և Յովասափի պատմութեան» Յովհ. Դամասկացուն վերագրուող յունարէն բնագրում այդ **Եթովպիա/Հնդկաստանը** տեղորոշուած է այսպէս. «Հնդկաստան կոչուող և Եգիպտոսից հեռու գտնուող երկիրը ընդարձակ է և խիտ բնակեցուած: Եգիպտոսի կողմից այն շրջապատուած է ծովերով ու նաւարկելի ծոցերով: Յամաքով նրան սահմանակից է Պարսկաստանը՝ բարբարոսական երկիր, որը վաղուց անտի կռապաշտական խաւարի մէջ էր և անիրաւութեան ճանապարհին»²²:

Ինչպէս «Դանիէլի տեսիլում», այստեղ էլ Պարսկաստան կոչուող երկիրը տեղաւորուած է Աֆրիկայի հիւսիսում, Եթովպիայի ցամաքային հարեանութեամբ և, դատելով «կռապաշտական խաւար» ու «անիրաւութեան ճանապարհ» որակումներից, նունացված է **Կարքեդովն/Կարթագէնի** հետ:

²¹ VIII դարի Հեղինակ Սահակ Վարդապետը (Մուստ) «արեւմտեան Հնդկներին» տարբերում է Եթովպացիներից, բայց դարձեալ տեղորոշում Աֆրիկայում (տե՛ս Սահակ Վարդապետը (Մուստ), Բացայայտութիւն: [Աշխատասիրութեամբ Նորայր Արք. Պողարեանի], Երուսաղէմ, 1994, էջ 80): Ի պատասխան վրաց եպիսկոպոսի հարցման, թէ ինչպէ՞ս հասկանալ Սաղմոսի «Դու փշրեցեր զգլուխ Հնդկաց» (ՀԳ, 14) տողը, Յովհ. Սարկաւազը գրում է. «Այս Հնդիկը, դրացիք Եգիպտոսի, եկին ի բուն Հնդկաց, որ յարեւելս հարաւայ առ Հնդես գետով ասեն, և այնքան զաւրացան ի պանդխտութենէն, որ և բազում անգամ տիրէին Եգիպտացւոց և Թագաւոր ի վերայ նոցա յինքեանց կացուցանէին» (Լ. Մելիքսեթ-Քէկ, Հովհաննէս Սարկաւազ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանութեան երկրի», ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1943, № 1, էջ 77): Ուրեմն՝ Եթովպիա-Հնդկաստան նոյնացումը գրաւել է և XII դարի հայ և վրաց գիտունների ուղադրութիւնը և իւրովի բացատրութիւն ստացել:

²² St. John Damascene, Barlaam and Ioasaph, With an English Translation by the rev. G. R. Woodward and H. Mattingly. London, 1962, p. 6. Э. Г. Хинтибидзе, Афонская грузинская литературная школа, Тбилиси, 1982, с. 74.